

ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի Գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության գույքի կառավարման և մոնիտորինգի բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 18/1-4.1-2)

Մասնակցում է գույքի գնահատման և վերագնահատման գործընթացի պարբերաբար իրականացվող աշխատանքներին: Մասնակցում է գույքի զարգացման ռազմավարական առաջարկի նախագծի մշակման, գույքային ներդրումների անհրաժեշտության վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման, ներդրումային ծրագրերի առաջարկների փաթեթի պատրաստման աշխատանքներին: Մասնակցում է առկա ակտիվների վերականգնման/վերանորոգման վերաբերյալ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության առաջարկների վերլուծությանը, Կոմիտեին ներկայացվող առաջարկության պատրաստման աշխատանքներին: Մասնակցում է Վարձակալի կողմից գույքի համալրման/վերականգնման վերաբերյալ առաջարկությունների վերլուծությանը և գնահատմանը, Կոմիտեի համար մասնագիտական եզրակացության պատրաստման աշխատանքներին: Մասնակցում է Կոմիտեի ակտիվների տվյալների բազայի վարման աշխատանքներին: Մասնակցում է Կոմիտեի սեփականությունը հանդիսացող խմելու ջրի, ռոռգման ջրի և կոլեկտորադրենաժային համակարգերի գույքի զարգացման ռազմավարական փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին: Կատարում է վերոհիշյալ գործառույթների հետ կապված հարակից այլ աշխատանքներ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն,
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Ջրային տնտեսության պետական կոմիտե պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը՝ բնօրինակի հետ,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագիր և անձնագրի պատճենը:

***Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:***

***Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 23.05.2017թ.:***

ՀՀ քաղաքացիները ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Կոմիտեի աշխատակազմ (ք. Երևան, Վարդանանց 13ա, հեռ. (010) 54-06-13):